Հաստատում եմ
«Վանաձորի Հ. Թումանյանի անվան պետական համալսարան» հիմնադրամի
ռեկտոր մ.գ.դ. _____ Ա.Մ. Ծատուրյան
«13» ____05____ 2026 թ.

# ԿԱՐԾԻՔ

## ԱՌԱՋԱՏԱՐ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ

**Լիլիթ Աշոտի Անտոնյանի «Տեղեկատվական և հաղորդակցական տեխնոլոգիաների կիրառումը դպրոցի կառավարման գործընթացում» խորագրով ԺԳ.00.01 - «Մանկավարժության տեսություն և պատմություն» մասնագիտությամբ մանկավարժական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսության մասին**

Լիլիթ Աշոտի Անտոնյանի «Տեղեկատվական և հաղորդակցական տեխնոլոգիաների կիրառումը դպրոցի կառավարման գործընթացում» թեմայով ատենախոսությունը և սեղմագիրը քննարկվել են Վանաձորի Հ. Թումանյանի անվան պետական համալսարանի մանկավարժության և հոգեբանության ամբիոնի նիստում (Արձ. թիվ 20, կայացած՝ 13.05.2026թ.):

Մասնակցում էին մանկավարժության և հոգեբանության ամբիոնի մ.գ.դ., պրոֆեսոր Պ. Գևորգյանը, մ.գ.թ., դոցենտներ Լ. Բաղդասարյանը, Ս. Բեժանյանը, Ք. Վիրաբյանը, Ա. Հովհաննիսյանը, Լ. Հարոյանը, Լ. Դանիելյանը, Լ. Մարուքյանը, Ա. Ստեփանյանը, Զ. Գրիգորյանը, մ.գ.թ. Ն. Ներկարարյան, Ն. Հովհաննիսյանը, հ.գ.թ., դոցենտներ Հ. Ավագիմյանը, Մ. Մազմանյանը, Ն. Կոստանդյանը, դասախոսներ Ն. Ստեփանյանը, Ն. Հովսեփյանը, Ա. Խաչատրյանը, Տ. Մալումյանը:

Հետազոտության թեմայի արդիականությունը պայմանավորված է ժամանակակից կրթական համակարգում տեղեկատվական և հաղորդակցական

տեխնոլոգիաների ու թվային գործիքների կիրառման հրամայականով: Թվայնացման արդի միտումները պահանջում են նորարարական լուծումների ներդրում, որոնք հնարավորություն կտան հաղթահարել ավանդական կրթության սահմանափակումները՝ ապահովելով ուսումնական գործընթացի անհատականացումն ու մատչելիությունը:

Ատենախոսությունը բաղկացած է ներածությունից, երկու գլխից, եզրակացություններից, 124 անուն օգտագործված գրականության ցանկից և հավելվածից: Ատենախոսության ընդհանուր ծավալը կազմում է 154 համակարգչային էջ:

**Ատենախոսության առաջին՝ «ՏՀՏ-ները ՀՀ կրթության համակարգում: Հանրակրթական համակարգի թվայնացման առանձնահատկությունները»** խորագրով գլխում, որն ունի չորս ենթագլուխ, ներկայացվել են կրթական համակարգի կառավարման արդիականացումը ՏՀՏ-ների, ամպային տեխնոլոգիաների և թվային գործիքների ներդրման համատեքստում: Հիմնավորվել է կառավարման նորարարական մոդելների անհրաժեշտությունը, որոնք թույլ են տալիս ապահովել դպրոցի զարգացման ռազմավարության մշակումը, փաստաթղթաշրջանառության ավտոմատացումը, աշխատակազմի վերահսկողությունն ու տվյալահեն որոշումների կայացումը՝ անցում կատարելով դեպի «թվային առաջնորդություն»: Վերլուծվել են ուսումնական գործընթացում թվային և առցանց գործիքների (Kahoot, Quizizz, Padlet, Moodle և այլն) կիրառման դրական արդյունքներն ու առանձնահատկությունները: Հիմնավորվել է, որ ՏՀՏ-ների կիրառումը նպաստում է ուսուցման անհատականացմանը, աշակերտների ճանաչողական մոտիվացիայի բարձրացմանը և վերափոխում է ուսուցիչ-աշակերտ փոխհարաբերությունները՝ դասարանային ավանդական մոդելից անցում կատարելով «շրջված դասարանի» և հիբրիդային ուսուցման:

Այս գլխում հեղինակը իրականացրել է կրթության թվայնացման միջազգային միտումների և ՅՈՒՆԵՍԿՕ-ի առաջնահերթությունների ուսումնասիրություն: Հիմնավորվել է թվային միջավայրի անընդհատ զարգացման անհրաժեշտությունը, ինչպես նաև վերլուծվել ՏՀՏ-ների ներդրմանը խոչընդոտող գործոնները, ինչպիսիք են ուսուցիչների և ղեկավար կազմի ոչ բավարար տեղեկատվական

կարողունակությունը:

Ատենախոսը ներկայացրել է ՏՀՏ-ների արդյունավետ կիրառման հոգեբանական, դիդակտիկական, մեթոդական և տեխնոլոգիական պայմանները: Անդրադարձ է կատարվել ՏՀՏ կախվածության ռիսկերին և դրանց կանխարգելման ուղիներին:

**Ատենախոսության երկրորդ՝ «Թվային գործիքների կիրառմամբ հանրակրթական դպրոցի կառավարման ուղիներն ու մեխանիզմներն արդի փուլում»** խորագրով գլուխը բաղկացած է հինգ ենթագլխից, որտեղ հեղինակի կողմից ներկայացվել է կրթության որակի և կառավարման գործընթացների բարելավման հիմնախնդիրը՝ տեղեկատվական-վերլուծական և ուսուցման ինքնաշխատ համակարգերի ներդրման միջոցով: Հիմնավորվել է, որ համակարգչային տեխնոլոգիաները վճռորոշ նշանակություն ունեն ներդպրոցական կառավարման համակարգում:

Հեղինակը կարևորել է տեղեկատվական-վերլուծական համակարգերի միջոցով անձնակազմի, սովորողների տվյալների համակարգման, ուսումնական պլանների մշակման և ծանրաբեռնվածության բաշխման նախապատրաստական աշխատանքները՝ շեշտադրելով դասացուցակի ինքնաշխատ կազմման տեխնոլոգիայի իրականացման կարևորությունը: Անդրադարձել է սովորողների առողջական վիճակի և ֆիզիկական զարգացման մշտադիտարկման կարևորությանը՝ նշելով մի շարք վտանգներ, ինչպիսիք են տեխնիկա-մեքենայական կախվածությունը, իրականության փոխարինումը թվային պատրանքներով և երեխաների ֆիզիկական պասիվությունը:

Աշխատանքում ծնողների մանկավարժական իրազեկվածությունը բարձրացնելու նպատակով շեշտադրվում են հեռահաղորդակցական հարթակների ու էլեկտրոնային կայքերի կարևորությունը: Հեղինակը քննության է առել կրթական հաստատություններում աշակերտների նախագծային և հետազոտական գործունեության կատարելագործումը տեղեկատվական նորարարական միջավայրերի ներդրման միջոցով: Հիմնավորել է, որ գիտահետազոտական աշխատանքի արդյունավետ կազմակերպումն անմիջականորեն պայմանավորված է թվային ուսումնական տիրույթի շարունակական բարելավմամբ և

համապատասխան փորձարարական նյութերի նպատակային ընտրությամբ:

Ատենախոսն առանձնահատուկ ուշադրություն է դարձրել դպրոցական համակարգչային փորձասենյակներին և թվային լաբորատորիաներին: Որպես հաջողված տեղայնացված փորձ՝ արժևորվել է Հայաստանի Հանրապետության կրթական համակարգում ճարտարագիտական խմբակների ներդրումը, որտեղ աշակերտները գործնականում յուրացնում են ծրագրավորման, ռոբոտաշինության և եռաչափ մոդելավորման հիմունքները:

Հետազոտության մեջ ներկայացվել է Երևան քաղաքի 9 և ՀՀ տարբեր մարզերի 5 դպրոցների վարչակազմերի շրջանում իրականացված հարցումների վերլուծությունը, որի նպատակն էր պարզել կառավարման ոլորտում ՏՀՏ-ների կիրառման իրական մակարդակը:

Հետազոտությունը ցույց է տվել, որ ՏՀՏ-ների նպատակային կիրառումը ոչ միայն բարելավում է կառավարման որակը, այլև ապահովում որոշումների կայացման թափանցիկությունն ու կրթական գործընթացի բոլոր սուբյեկտների գործուն ներգրավվածությունը:

Ատենախոսը ներկայացրել է «ՏՀՏ-ի մանկավարժականացման» և դպրոցի թվայնացման գործընթացները համակարգող խորհրդի աշխատանքային պլանը և երեխաների համակարգչային կախվածության կանխարգելմանն ուղղված ծնողական ժողովի օրինակելի սցենարը, ինչպես նաև ՏՀՏ-ներից երեխաների կախվածության կանխարգելմանն ուղղված ծնողական կրթության թեմաներ: Ապացուցել է, որ կառավարման արդյունավետությանը հնարավոր չէ հասնել առանց տնօրենի բարձր տեխնոլոգիական կարողունակության: Տնօրենի նախաձեռնողականությունը դրսևորվում է նաև տարբեր հմտություններ ունեցող ուսուցիչներից կազմված աշխատախմբերի ստեղծմամբ և փորձագիտական խորհրդատվության ապահովմամբ:

Աշխատության արժեքը ներդպրոցական կառավարման օպտիմալ մոդելն է, որի վերջնարդյունքում ակնկալվում է ունենալ «ՏՀՏ-ի մանկավարժականացմանը» նպաստող, դպրոցի կառավարմանը, մանկավարժական գործընթացի բոլոր սուբյեկտների մասնակցությունը ապահովող ներդպրոցական կառավարման արդի համակարգ և դրա իրականացման մանկավարժական պայմաններ:

Հիմնավորվել է, որ առաջադրված օպտիմալ մոդելի գործնական արդյունավետությունը հնարավոր է երաշխավորել հստակ սահմանված մանկավարժական պայմանների պարտադիր ապահովման դեպքում:

Ատենախոսության սեղմագիրը համապատասխանում է աշխատանքի բովանդակությանը, արտացոլում է նրա հիմնական դրույթները:

Ատենախոսն ունի 9 գիտական հոդված:

Հարկ ենք համարում նշել Լիլիթ Անտոնյանի ատենախոսական աշխատանքի արժեքավոր կողմերը.

1. թեման համահունչ է արդի տեխնոլոգիական մարտահրավերներին,

2. մանրամասն վերլուծված են ուսումնական գործընթացում թվային գործիքների և ՏՀՏ-ների կիրառման առանձնահատկությունները,

3. ատենախոսը աշխատանքում անդրադարձել է նաև կրթության թվայնացման միջազգային միտումներին, ինչն ավելի է բարձրացնում աշխատանքի արժեքը:

Արժևորելով ատենախոսի կողմից կատարած գիտական աշխատանքը՝ հարկ ենք համարում ներկայացնել մի քանի նկատառում.

1. Աշխատանքի 1.4 ենթագլուխը, քանի որ նվիրված է «մանկավարժական պայման» հասկացությանը, ցանկալի էր հեղինակը քններ մի քանի սահմանումներ և ամբողջացներ իր սահմանմամբ:

2. Էջ 77-ում նշված է «ավտոմատ հմտություններ» հասկացությունը, ինչը կարծում ենք գիտական չէ:

3. Աշխատանքը կշահեր, եթե 2.3 ենթագլխում հարցման թվային վերլուծությունը ներկայացվեր տրամագրերի տեսքով:

4. Աշխատանքի 2.5 ենթագլխում դիտարկվել է ներդպրոցական կառավարման օպտիմալ մոդելը և դրա իրականացման մանկավարժական պայմանները: Կարծում ենք 3-րդ, 4-րդ, 5-րդ, 6-րդ պայմանները հստակեցնելու կարիք ունեն:

5. Եզրակացությունները կարելի էր ներկայացնել պնդումներով և ավելի սեղմ:

6. Աշխատանքում առկա են տեխնիկական, թարգմանչական վրիպումներ:

Լիլիթ Աշոտի Անտոնյանի «Տեղեկատվական և հաղորդակցական տեխնոլոգիաների կիրառումը դպրոցի կառավարման գործընթացում» խորագրով

թեկնածուական ատենախոսությունն ունի գիտական նշանակալի արժեք, այն օգտակար է դպրոցի աշխատակիցների համար:

## Եզրակացություն

Հետազոտության թեմայի արդիականությունը, նրա գիտական նորույթը, տեսական և գործնական նշանակությունը, ինչպես նաև ստացված արդյունքների հավաստիությունը և հիմնավորվածությունը թույլ են տալիս եզրակացնել, որ Լիլիթ Անտոնյանի «Տեղեկատվական և հաղորդակցական տեխնոլոգիաների կիրառումը դպրոցի կառավարման գործընթացում» թեմայով ատենախոսությունն ինքնուրույն, ավարտուն գիտական աշխատանք է, ունի կարևոր տեսական և գիտական նշանակություն, համապատասխանում է ՀՀ ԲԿԳԿ-ի գիտական աստիճանաշնորհման կանոնակարգի 7-րդ կետի պահանջներին և ԺԳ.00.01 - «Մանկավարժության տեսություն և պատմություն» մասնագիտական թվանիշին, իսկ ատենախոսն արժանի է հայցվող մանկավարժական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանին:

Մանկավարժության և հոգեբանության ամբիոնի վարիչ,
մ.գ.թ., դոցենտ՝ Լ.Գ. Բաղդասարյան

Լ. Բաղդասարյանի ստորագրությունը հաստատում եմ՝

ՎՊՀ-ի գիտքարտուղար,
մ.գ.թ., դոցենտ՝ Ս.Ս. Բեժանյան